

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի
 «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող
 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»
 № 483-Ն որոշման 4-րդ կետի կատարման վերաբերյալ

NN ը/կ	Գործողությունը	Կատարման ընթացքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
59	<p>«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանակում անցկացվող մրցույթ՝ սայլակով տեղաշարժվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների համար</p>	<p>Մրցույթի եզրափակիչ փուլն անցկացվել է 2019 թվականի հոկտեմբերի 6-9-ը Կոտայքի մարզի Ծաղկաձորի գիսավոր մարզահամալիրում: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը միջոցառման մասնակից ընտանիքի կազմում հաշմանդամություն ունեցող բոլոր ընտանիքներին ապահովել են մարզահագուստով, իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հոգացել է ճանապարհածախսը և կեցության ծախսերը: Մասնակիցները պարգևատրվել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վկայագրերով, դրամական մրցանակներով, հուշանվերներով,</p>	<p>Մասնակցել են Հայաստանի Հանրապետության 10 մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության սայլակով տեղաշարժվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց 21 ընտանիքներ՝ թվով 63 մարդ: Մրցույթն անցկացվել է 6 մրցաձևերից՝ խաղային փոխանցվազք (30 մ), վարժություն բասկետբոլի գնդակով, խաղային փոխանցվազք թենիսի գնդակներով, խաղային փոխանցվազք (80 մ), օղակներով նետումներ նշանակետին, «Հավաքիր «ՀԱՂԹԱՆԱԿ» բառը»:</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	2019 թ.	ՀՀ պետական բյուջե

1	2	3	4	5	6	7
	<p>«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում</p>	<p>ինչպես նաև ընտանիքների երեխաներին հանձնվել են նվերներ:</p> <p>Առաջին փուլն անցկացվել է Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում: Առաջին փուլի արդյունքներով ձևավորվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի երկրորդ փուլի մասնակիցների կազմը: Երկրորդ՝ եզրափակիչ փուլը անցկացվել է օգոստոսի 27-30-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում: Մրցույթին մասնակցել են լողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ և մտավոր սահմանափակումներ ունեցող անձինք: Մրցույթի մասնակիցները պարզևատրվել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի վկայագրերով, մեդալներով, գավաթներով և դրամական մրցանակներով:</p>	<p>Մրցույթն անցկացվել է 2 փուլով 7 մարզաձևերից՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, բազկամարտ, շաշկի, դարթս, եռամարտ մտավոր սահմանափակումներ ունեցող անձանց համար և եռամարտ լողական խնդիրներ ունեցող անձանց համար: Առաջին փուլին մասնակցել է շուրջ 300 մարդ: Երկրորդ՝ եզրափակիչ փուլին մասնակցել է 192 մարդ:</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
	<p>«Աբու Դաբիում (ԱՄԷ) կայացած հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության</p>	<p>Մարտի 8-22-ը Աբու Դաբիում (ԱՄԷ) կայացած հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերում Հայաստանի Հանրապետության մարզիկները հանդես են եկել լող և ատլետիկա մարզաձևերում: Լող մարզաձևում հանդես եկող Ռոբերտ Պետրոսյանը 50 մ թիկնալող մրցաձևում գրավել է առաջին տեղը,</p>	<p>Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ներկայացված է եղել երկու մարզիկով (պատվիրակության կազմը՝ 6 հոգի):</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>«Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություն</p>	<p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5	6	7
	<p>մասնակցության ապահովում»</p> <p>«Բելառուսի Հանրապետության Գոմել քաղաքում կայացած խուլերի ըմբշամարտի Եվրոպայի 7-րդ առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում»</p> <p>«Խուլերի շախմատի Հայաստանի Հանրապետության 14-րդ առաջնության անցկացում»</p>	<p>իսկ 50 մ ազատ ոճ մրցաձևում՝ 6-րդ տեղը: Ատլետիկա մարզաձևում հանդես եկող Գևորգ Մանուկյանը 100 մ վազք մրցաձևում գրավել է առաջին տեղը, իսկ թափավազքով հեռացատկ մրցաձևում՝ 3-րդ տեղը:</p> <p>Հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 3-ը Բելառուսի Հանրապետության Գոմել քաղաքում կայացած խուլերի ըմբշամարտի Եվրոպայի 7-րդ առաջնությունում հանդես եկող 5 հայ մարզիկներից 4-ը գրավել են մրցանակային տեղեր՝ նվաճելով 3 արծաթե և 1 բրոնզե մեդալ:</p> <p>Սենիկ Սերոբյան – 2-րդ տեղ՝ 57 կգ քաշային կարգ (ազատ ոճ), Սարգիս Սարգսյան – 2-րդ տեղ՝ 55 կգ քաշային կարգ (հունահռոմեական ոճ), Նարեկ Նիկողոսյան – 2-րդ տեղ՝ 87 կգ քաշային կարգ (հունահռոմեական ոճ), Ժորա Գրիգորյան – 3-րդ տեղ՝ 67 կգ քաշային կարգ (հունահռոմեական ոճ):</p> <p>Մայիսի 18-20-ը Երևանում անցկացվել է խուլերի շախմատի ՀՀ առաջնությունը, որին մասնակցել են ՀՀ տարբեր մարզերից և Երևան քաղաքից 32 խուլ մարզիկներ: Մրցանակային տեղեր գրաված</p>	<p>Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ներկայացված է եղել հինգ մարզիկով (պատվիրակության կազմը՝ 8 հոգի):</p> <p>Մասնակցել են Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 24 խուլ շախմատիստներ:</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն</p> <p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>«Խուլերի հայկական սպորտային կոմիտե»</p>	<p>2019 թ.</p> <p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p> <p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5	6	7
	<p>«Խուլերի ըմբշամարտի ուսումնամարզական հավաք»</p>	<p>մարզիկները պարզևատրվեցին դրամական պարզևով: Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության՝ առաջնության հաղթողներն են՝</p> <p>1-ին տեղ - Սարգիս Աթաբեկյան, ք. Վանաձոր,</p> <p>2-րդ տեղ - Հակոբ Հակոբյան, ք. Երևան,</p> <p>3-րդ տեղ - Սարո Մելքոնյան, ք. Երևան:</p> <p>Հոկտեմբերի 16-26-ը «Օլիմպիական» մարզահամալիրում անցկացվել է ազատ և հունա-հռոմեական ըմբշամարտի ուսումնամարզական հավաք: Ուսումնամարզական հավաքի նպատակն էր էլ ավելի նախապատրաստվելու և բարձր արդյունքներ ցուցաբերելու Բելառուսի Հանրապետությունում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի 7-րդ առաջնությունում:</p>	<p>Մասնակցել են 2 մարզիչները և 5 մարզիկները:</p>	<p>հասարակական կազմակերպություն</p> <p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն</p>	<p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
	<p>«Կույր շախմատիստների տղամարդկանց Հայաստանի Հանրապետության անհատական եզրափակիչ առաջնության անցկացում»</p>	<p>Անցկացվել է հունիսի 11-ից հուլիսի 24-ը Երևանում: Մասնակցել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող կույր շախմատիստներ: Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության՝ մրցումների կանոնակարգի համաձայն առաջնությանը մասնակցել են 2018</p>	<p>Մասնակցել են առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող 14 կույր շախմատիստներ, ընդամենը՝ 22 մարդ (մրցավարական հանձնաժողով և ուղեկցորդ):</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>«Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպություն</p>	<p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5	6	7
	<p>«Հաշմանդամների հանրապետական մարզական 17-րդ փառատոնի անցկացում»</p>	<p>թվականի շախմատի առաջնությունում 1-ինից 4-րդ տեղերը գրաված կույր շախմատիստները, ինչպես նաև մարզերում և Երևանում անցկացված առաջնություններում հաղթած առաջին և երկրորդ խմբի շախմատիստները: Մրցանակային տեղեր գրաված կույր շախմատիստները պարգևատրվել են դրամական պարգևներով և հավաստագրերով: Նմանատիպ մոտեցումը իր դրական արդյունքներն է տալիս տեսողական խնդիրներ ունեցող անձանց ինքնադրսևորման և հասարակության մեջ լիարժեք ինտեգրման գործընթացում, ինչպես նաև խթանում է մարզաձևի զարգացման շարունակականությունը:</p> <p>Հունիսի 11-13-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում անցկացվել է հաշմանդամություն ունեցող անձանց հանրապետական մարզական փառատոնը: Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության մասնակիցները՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հաշմանդամություն ունեցող մարզիկներ են: Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարգևատրվել են ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներով,</p>	<p>65 մարզիկներ իրենց ուժերը չափել են 6 մարզաձևերում՝ սեղանի թենիս, սայլակներով բասկետբոլ, լող, բազկամարտ, ծանրամարտ և շախմատ:</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>«Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն</p>	<p>2019 թ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5	6	7
	<p>Հովանավորչական միջոցներով անցկացվող միջոցառումներ</p>	<p>հավաստագրերով և դրամական մրցանակներով:</p> <p>Հունիսի 25-ին «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում:</p>	<p>Միջոցառմանը մասնակցել են մտավոր խնդիրներ ունեցող 50 սաներ:</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>«Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոն</p>	<p>2019 թ.</p>	<p>Ֆինանսական միջոցներ չեն պահանջվել:</p>
	<p>«Սպորտլանդիա» մարզական խաղերի անցկացում Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթահամալիրում</p>	<p>Հոկտեմբերի 15-ին հատուկ կրթահամալիրի մարզադահլիճում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում:</p>	<p>Մարզական խաղերին մասնակցել են լսողության խանգարումներ ունեցող 5-9-րդ դասարանների երեխաներ:</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթահամալիր</p>	<p>2019 թ.</p>	<p>Ֆինանսական միջոցներ չեն պահանջվել:</p>